ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, , armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունիսի 2021 թվականի N 479-Ա

ՆՈՐԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՆՈՐԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 24-ի թիվ 09 նիստի արձանագրությունը և քաղաքացի Նորա Առաքելյանի 2021 թվականի հունիսի 8-ի թիվ 2110 դիմումը, **որոշում եմ՝**

1.Նորա Արմենի Առաքելյանին նշանակել հոգաբարձու Նորա Հակոբյանի (ծնված՝ 16.10.2005) նկատմամբ մինչև երեխայի 18 (տասնութ) տարին լրանալը:
2.Նորա Արմենի Առաքելյանին վերապահել ի շահ իր խնամարկյալի, առանց հատուկ լիազորագրի կնքել անհրաժեշտ գործարքներ, հանդես գալ նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:
3.Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ համայնքի ղեկավարին կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ ՀՀ վարչական դատարան:
4.Որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է սույն որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2021թ. հունիսի 25
ք. Արմավիր